ԱԺԲԳ

ՏԵՂԵԿԱՆՔ

2020-2022թթ. Հայաստանի Հանրապետության պետական պարտքի վերաբերյալ (մարտ ամսվա վերջի դրությամբ)









2022թ. մարտի 31-ի դրությամբ՝

1) ՀՀ պետական պարտքը կազմել է 4 տրիլիոն 563.9 մլրդ ՀՀ դրամ, աճելով 2021թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 3%-ով, 2021թ. մարտի 31-ի նկատմամբ նվազելով 0.6%-ով, իսկ 2020 թվականի մարտի 31-ի նկատմամբ աճելով 25.1%-ով,

2) ՀՀ կառավարության պարտքը կազմել է 4 տրիլիոն 332.9 մլրդ ՀՀ դրամ, աճելով 2021թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ 2.9%-ով, 2021թ. մարտի 31-ի նկատմամբ՝ 0.1%-ով, իսկ 2020թ. մարտի 31-ի նկատմամբ՝ 27.5%-ով,

3) ՀՀ Կենտրոնական բանկի արտաքին պարտքը կազմել է 231 մլրդ ՀՀ դրամ, աճելով 2021թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ 5.1%-ով, 2021թ. մարտի 31-ի նկատմամբ նվազելով 12%-ով, իսկ 2020թ. մարտի 31-ի նկատմամբ նվազելով 7.7%-ով,

4) ՀՀ պետական պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 9 մլրդ 356.6 մլն ԱՄՆ դոլար, աճելով 2021թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 1.4%-ով, 2021թ. մարտի 31-ի նկատմամբ՝ 8.1%-ով, իսկ 2020թ. մարտի 31-ի նկատմամբ՝ 28.4%-ով,

5) ՀՀ կառավարության պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 8 մլրդ 883 մլն. ԱՄՆ դոլար, աճելով 2021թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 1.3%-ով, 2021թ. մարտի 31-ի նկատմամբ՝ 8.9%-ով, իսկ 2020թ. մարտի 31-ի նկատմամբ՝ 30.9%-ով,

6) ՀՀ ԿԲ արտաքին պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 473.6 մլն. ԱՄՆ դոլար, աճելով 2021թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 3.5%-ով, նվազելով 2021թ. մարտի 31-ի նկատմամբ՝ 4.2%-ով, իսկ 2020թ. մարտի 31-ի նկատմամբ նվազելով 5.2%-ով,

7) ՀՀ կառավարության արտաքին պարտքը կազմել է 3 տրիլիոն 10.4 մլրդ ՀՀ դրամ, աճելով 2021թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 1.3%-ով, նվազելով 2021 թ. մարտի 31-ի նկատմամբ 8.8%-ով, իսկ 2020թ. մարտի 31-ի նկատմամբ աճելով 15.2%-ով,

8) ՀՀ կառավարության ներքին պարտքը կազմել է 1 տրիլիոն 322.5 մլրդ ՀՀ դրամ, աճելով 2021թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 6.9%-ով, 2021թ. մարտի 31-ի նկատմամբ՝ 28.7%-ով, իսկ 2020թ. մարտի 31-ի նկատմամբ՝ 68.4%-ով,

9) ՀՀ Կենտրոնական բանկի արտաքին պարտքը կազմել է 231 մլրդ ՀՀ դրամ, աճելով 2021թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ 5.1%-ով, 2021թ. մարտի 31-ի նկատմամբ նվազելով 12%-ով, իսկ 2020թ. մարտի 31-ի նկատմամբ նվազելով 7.7%-ով,

10) ՀՀ կառավարության արտաքին պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 6 մլրդ 171.7 մլն ԱՄՆ դոլար, նվազելով 2021թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ 0.3%-ով, 2021թ. մարտի 31-ի նկատմամբ՝ 0.8%-ով, իսկ 2020թ. մարտի 31-ի նկատմամբ աճելով 18.3%-ով,

11) ՀՀ կառավարության ներքին պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 2 մլրդ 711,3 մլն ԱՄՆ դոլար, աճելով 2021թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 5.2%-ով, 2021թ. մարտի 31-ի նկատմամբ՝ 40%-ով, իսկ 2020թ. մարտի 31-ի նկատմամբ՝ 72.9%-ով,

12) ՀՀ ԿԲ արտաքին պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 473.6 մլն. ԱՄՆ դոլար, աճելով 2021թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 3.5%-ով, նվազելով 2021թ. մարտի 31-ի նկատմամբ՝ 4.2%-ով, իսկ 2020թ. մարտի 31-ի նկատմամբ նվազելով 5.2%-ով:

ԱԺԲԳ









ՀՀ կառավարության արտաքին վարկերի գծով պարտքը 2022թ. մարտի 31-ի դրությամբ կազմել է 4 մլրդ 465.82 մլն ԱՄՆ դոլար, նվազելով 2021թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ 0.34%-ով, 2021թ. մարտի 31-ի նկատմամբ՝ 1.9%-ով, իսկ 2020թ. մարտի 31-ի նկատմամբ աճելով 5.1%-ով:

2022թ. մարտի 31-ի դրությամբ ՀՀ կառավարության արտաքին վարկերի գծով պարտքի կառուցվածքում `

1) միջազգային կազմակերպությունների բաժինը կազմել է 78.28%, ինչը ավել է 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ արձանագրված ցուցանիշից 0.9 տոկոսային կետով, 2021թ. մարտի 31-ի ցուցանիշից՝ 0.63 տոկոսային կետով, 2020թ. մարտի 31-ի ցուցանիշից՝ 2.83 տոկոսային կետով,

2) օտարերկրյա պետությունների բաժինը կազմել է 21.37%, ինչը պակաս է 2021թ. դեկտեմբերի 31-ի համեմատությամբ 0.88 տոկոսային կետով, 2021թ. մարտի 31-ի համեմատությամբ՝ 0.57 տոկոսային կետով, իսկ 2020թ. մարտի 31-ի համեմատությամբ՝ 2.72 տոկոսային կետով,

3) առևտրային բանկերի բաժինը կազմել է 0.35%, ինչը պակաս է 2022թ. դեկտեմբերի 31-ի ցուցանիշից՝ 0.02 տոկոսային կետով, 2021թ. մարտի 31-ի ցուցանիշից՝ 0.06 տոկոսային կետով, իսկ 2020թ. մարտի 31-ի ցուցանիշից՝ 0.11 տոկոսային կետով:

2022թ. հունվար-մարտին ՀՀ կառավարության պարտքի գծով վճարված `

1) տոկոսավճարները կազմել են 39.15 մլրդ դրամ, ինչը 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 1.86 մլրդ դրամով, իսկ 2020թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 1.35 մլրդ դրամով:

2) ներքին տոկոսավճարները կազմել են 12.38 մլրդ դրամ, ինչը 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է 2.09 մլրդ դրամով, իսկ 2020թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է 1.53 մլրդ դրամով:

3) արտաքին տոկոսավճարները կազմել են 26.77 մլրդ դրամ, ինչը 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 3.95 մլրդ դրամով, իսկ 2020թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 2.88 մլրդ դրամով:

ԱԺԲԳ

Պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորումը փոխառու զուտ միջոցների հաշվին (առանց մուրհակների), մլրդ դրամ



Պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորումը ներքին և արտաքին փոխառու զուտ միջոցների հաշվին (առանց մուրհակների), մլրդ դրամ



ՀՀ կառավարության կողմից արտաքին վարկերի ստացումը և սպասարկումը, մլն ԱՄՆ դոլար



ՀՀ կառավարության կողմից արտաքին վարկերի ստացումը և սպասարկումը, մլն ԱՄՆ դոլար



2022թ. հունվար-մարտին պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորումը՝

1) փոխառու զուտ միջոցների հաշվին կազմել է 88.75 մլրդ դրամ, ինչը 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է 287.48 մլրդ դրամով, իսկ 2020թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 64.09 մլրդ դրամով,

2) ներքին փոխառու միջոցների հաշվին կազմել է 73.19 մլրդ դրամ, ինչը 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 54.69 մլրդ դրամով, իսկ 2020թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է 32.34 մլրդ դրամով,

3) արտաքին փոխառու միջոցների հաշվին կազմել է 15.56 մլրդ դրամ, ինչը 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է 342.17 մլրդ դրամով, իսկ 2020թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 31.75 մլրդ դրամով:

ՀՀ կառավարության կողմից 2022թ. հունվար-մարտին՝

1) արտաքին վարկերի սպասարկման նպատակով վճարվել է 13.51 մլն դոլար տոկոսավճար, ինչը 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է 12.1%-ով, իսկ 2020թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է 30.7%-ով,

2) արտաքին վարկերի սպասարկման նպատակով մարվել է 52.43 մլն դոլարի մայր գումար, ինչը 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է 5.3%-ով, իսկ 2020թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ պակաս է 1.6%-ով,

3) ստացվել են 84.01 մլն դոլարի վարկային միջոցներ, ինչը 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 433.1%-ով, իսկ 2020թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 341%-ով,

4) արտաքին վարկերի սպասարկման նպատակով վճարվել է 136.44 մլն դոլար (տոկոսավճար և մայր գումարի մարում), ինչը 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 19.2%-ով, իսկ 2020թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 88.6%-ով:

ԱԺԲԳ

Պետական պարտատոմսերի ծավալը, մլրդ դրամ



Պետական պարտատոմսերի միջին ժամկետայնությունը, օր



ՀՀ Կառավարության պարտքի միջին տոկոսադրույքը, %



ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքը, ըստ թողարկման (ներգրավման) ժամկետայնության, %



2022թ. մարտի 31-ի դրությամբ՝

1) Շրջանառության մեջ գտնվող ՀՀ պետական պարտատոմսերի ծավալը կազմել է 1 տրիլիոն 291.8 մլրդ դրամ, ինչը 2021թ. դեկտեմբերի 31-ի, 2021թ. մարտի 31-ի և 2020թ. մարտի 31-ի համեմատությամբ ավել է համապատասխանաբար՝ 82.9, 311.5 և 573.6 մլրդ դրամով,

2) Շրջանառության մեջ գտնվող ՀՀ պետական պարտատոմսերի միջին ժամկետայնությունը կազմել է 3608 օր, ինչը 2021թ. դեկտեմբերի 31-ի համեմատությամբ պակաս է 153 օրով, 2021թ. մարտի 31-ի համեմատությամբ՝ 257 օրով, իսկ 2020թ. մարտի 31-ի համեմատությամբ ավել է 2 օրով:

ՀՀ կառավարության պարտքի միջին տոկոսադրույքը 2022թ. մարտի 31-ի դրությամբ կազմել է 4.79%, ինչը 2021թ. դեկտեմբերի 31-ի համապատասխան ցուցանիշի համեմատությամբ ավել է 0.11 տոկոսային կետով, 2021թ. մարտի 31-ի համեմատությամբ ավել է 0.55 տոկոսային կետով, իսկ 2020թ. մարտի 31-ի համեմատությամբ պակաս է 0.01 տոկոսային կետով:

ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքում ըստ թողարկման (ներգրավման) ժամկետայնության 2022թ. մարտի 31-ի դրությամբ՝

1) կարճաժամկետ պարտքի բաժինը կազմել է 1.16%, ինչը 2021թ. դեկտեմբերի 31-ի համեմատությամբ փոքր է 0.04 տոկոսային կետով, 2021թ. մարտի 31-ի համեմատությամբ մեծ է է 0.12 տոկոսային կետով, իսկ 2020թ. մարտի 31-ի համեմատությամբ մեծ է 0.53 տոկոսային կետով,

2) միջնաժամկետ պարտքի բաժինը կազմել է 9.69%, ինչը 2021թ. դեկտեմբերի 31-ի, 2021թ. մարտի 31-ի և 2020թ. մարտի 31-ի համեմատությամբ մեծ է համապատասխանաբար՝ 0.58, 2.77 և 2.52 տոկոսային կետերով,

3) երկարաժամկետ պարտքի բաժինը կազմել է 89.15%, ինչը 2021թ. դեկտեմբերի 31-ի, 2021թ. մարտի 31-ի և 2020թ. մարտի 31-ի համեմատությամբ փոքր է համապատասխանաբար՝ 0.54, 2.9 և 3.04 տոկոսային կետերով:

ԱԺԲԳ

ՏԵՂԵԿԱՆՔ
ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՐՏՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ 2022-2024 ԹԹ. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՈՒՂԵՆՇԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ (2020-2022թթ. մարտ ամսվա վերջի դրությամբ)

ՀՀ կառավարության պարտքի մինչև մարում միջին ժամկետը, տարի



Առաջիկա 365 օրվա ընթացքում մարման ենթակա ՀՀ կառավարության պարտքի տեսակարար կշիռը (պետական գանձապետական պարատոմսերի գծով), %



ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքն ըստ տոկոսադրույքի, %



ՀՀ Կառավարության ներքին և արտաքին պարտքի կշիռները, %



ՀՀ կառավարության պարտքի կառավարման 2022-2024թթ. ռազմավարական ծրագրով՝

1) պարտքի մինչև մարում միջին ժամկետի ուղենշային ցուցանիշը սահմանված է 8-11 տարի: ՀՀ կառավարության պարտքի մինչև մարում միջին ժամկետը 2022թ. մարտի 31-ի դրությամբ կազմել է 8.18 տարի: Այս ցուցանիշը 2021թ. մարտի 31-ի դրությամբ արձանագրված ցուցանիշից պակաս է 0.52 տարով, իսկ 2020թ. մարտի 31-ի ցուցանիշից՝ 0.74 տարով;

2) առաջիկա 365 օրվա ընթացքում մարման ենթակա ՀՀ կառավարության պարտքի տեսակարար կշռի (պետական գանձապետական պարատոմսերի գծով) ուղենշային ցուցանիշը սահմանված է առավելագույնը 20%: Առաջիկա 365 օրվա ընթացքում մարման ենթակա ՀՀ կառավարության պարտքի տեսակարար կշիռը (պետական գանձապետական պարատոմսերի գծով) 2022թ. մարտի 31-ի դրությամբ կազմել է 9.15%, որը 2021թ. մարտի 31-ի և 2020թ. մարտի 31-ի դրությամբ արձանագրված մակարդակներից փոքր է 0.09 և 4.48 տոկոսային կետերով:

3) ֆիքսված տոկոսադրույքով պարտքի կշռի ուղենշային ցուցանիշը սահմանված է առնվազն 80%: ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքն ըստ տոկոսադրույքի 2022թ. մարտի 31-ի դրությամբ ունեցել է հետևյալ պատկերը. ֆիքսված տոկոսադրույքով՝ 82.38%, լողացող տոկոսադրույքով՝ 17.62%: Ընդ որում, 2022թ. մարտի 31-ի դրությամբ արձանագրված ֆիքսված տոկոսադրույքի ցուցանիշը 2021թ. մարտի 31-ի ցուցանիշից ավել է 0.39 տոկոսային կետով, իսկ 2020թ.մարտի 31-ի ցուցանիշից պակաս է 1.29 տոկոսային կետով:

4) ներքին պարտքի ուղենշային ցուցանիշը սահմանված է առնվազն 25.%, ՀՀ կառավարության ներքին և արտաքին պարտքի կշիռները 2022թ. մարտի 31-ի դրությամբ ունեցել են հետևյալ պատկերը. արտաքին պարտք՝ 69.48%, ներքին պարտք՝ 30.52%: Ընդ որում, 2022թ. մարտի 31-ի դրությամբ արձանագրված ներքին պարտքի կշռի ցուցանիշը 2021թ. մարտի 31-ի և 2020թ. մարտի 31-ի ցուցանիշները գերազանցում է համապատասխանաբար՝ 6.78 և 7.41 տոկոսային կետերով: